ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԳՆՈՒՄՆԵՐԻ ԲՈՂՈՔԱՐԿՄԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ

ք. Երևան 29.03.2018թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ՀՀ գնումների բողոքարկման խորհրդի

թիվ ՍՑ-ԷՍ-2018/12

ՀՀ գնումների բողոքարկման խորհուրդը (այսուհետ նաև՝ Խորհուրդ) ուսումնասիրելով ՀՀ ֆինանսների նախարարության 01.02.2018թ. թիվ 03/26-3/1599-18 գրությամբ «Տիգրան Ավիկ» ՍՊԸ-ին (այսուհետ՝ նաև Ընկերություն) գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված պաշտոնական ընթացակարգով (այսուհետ՝ նաև պաշտոնական ընթացակարգ) ներկայացված հիմքերը, պարզեց հետևյալը.

1. **<u>ՀՀ ֆինանսների նախարարության ներկայացրած փաստերը և պահանջը.</u>**

ՀՀ ֆինանսների նախարարությունը, Երևանի Մ. Հերացու անվան պետական բժշկական համալսարան հիմնադրամի (այսուհետ նաև՝ Պատվիրատու) 29.01.2018թ. թիվ 19 գրության հիման վրա, 01.02.2018թ. թիվ 03/26-3/1599-18 գրությամբ Խորհրդում նախաձեռնել է «Տիգրան Ավիկ» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում (այսուհետ նաև՝ Ցուցակ) ներառելու նպատակով պաշտոնական ընթացակարգ:

ՀՀ ֆինանսների նախարարությունը պատշաճ ծանուցվել է Խորհրդում անցկացվող նիստերի ժամանակացույցի վերաբերյալ, սակայն նախարարության կողմից լիազորված որևէ ներկայացուցիչ չի ներկայացել:

2. <u>Երևանի Մ. Հերացու անվան պետական բժշկական համալսարան հիմնադրամի կողմից ներկայացված փաստարկները և դիրքորոշումը.</u>

Երևանի Մ. Հերացու անվան պետական բժշկական համալսարան հիմնադրամը 29.01.2018թ. թիվ 19 գրությամբ դիմել է ՀՀ ֆինանսների նախարարությանը՝ հայտնելով հետևյալը.

«Երևանի Մ. Հերացու անվան պետական բժշկական համալսարան հիմնադրամի կողմից հայտարարված ԳՀԱՇՁԲ-2017/1-ԵՊԲՀ ծածկագրով գնանշման հարցման միջոցով գնում կատարելու ընթացակարգին հայտ է ներկայացրել «Տիգրան Ավիկ» ՍՊԸ-ն: Գնահատող հանձնաժողովի 28.12.2017թ. թիվ 2 որոշմամբ 1-ին չափաբաժնի մասով առաջին տեղ զբաղեցրած մասնակից է ճանաչվել «Տիգրան Ավիկ» ՍՊԸ-ն: 29.12.2017թ. ՀՀ պետական եկամուտների կոմիտե հարցում է կատարվել ՀՀ կառավարության 04.05.2017թ. «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 43-րդ կետի 3-րդ ենթակետով նախատեսված տվյալների ճշտման մասին: Գնահատող հանձնաժողովի 12.01.2018թ. թիվ 3 որոշմամբ արձանագրվել է, որ ՀՀ պետական եկամուտների կոմիտեի կողմից 11.01.2018թ. տրված եզրակացության համաձայն՝ «Տիգրան Ավիկ» ՍՊԸ-ի կողմից հայտը ներկայացնելուն օրվան նախորդող երեք հաշվետու տարիների համախառն եկամուտի հանրագումարը կազմում է 0 (զրո) ՀՀ դրամ:»:

Խորհրդում նախաձեռնված պաշտոնական ընթացակարգի քննության նպատակով տեղի ունեցած նիստին մասնակցում էր Երևանի Մ. Հերացու անվան պետական բժշկական համալսարան հիմնադրամի ներկայացուցիչ՝ Սերժ Մկրտչյանը:

3. <u>«Տիգրան Ավիկ» ՍՊԸ-ի ներկայացրած փաստարկները և դիրքորոշումը.</u>

«Տիգրան Ավիկ» ՍՊԸ-ն 15.02.2018թ. Խորհրդին ուղղված գրությամբ հայտնել է հետևյալը.

«Երևանի Մխիթար Հերացու անվան պետական բժշկական համալսարան հիմնադրամի կողմից կազմակերպված ԳՀԱՇՁԲ-2017/1-ԵՊԲՀ ծածկագրով գնման ընթացակարգին մասնակցության հայտ է ներկայացրել նաև «Տիգրան Ավիկ» ՍՊԸ-ն:

ԳՀԱՇՁԲ-2017/1-ԵՊԲՀ ծածկագրով գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի (այսուհետ նաև՝ գնահատող հանձնաժողով) 28.12.2017թ. ժամը 10:00-ին

տեղի ունեցած նիստի թիվ 2 արձանագրության 3-րդ կետի համաձայն՝ ԳՀԱՇՁԲ-2017/1-ԵՊԲՀ ծածկագրով գնման ընթացակարգին մասնակցող բոլոր ընկերությունների կողմից ներկայացված փաստաթղթերը համապատասխանում էին ընթացակարգի հրավերով սահմանված պահանջներին, բացառությամբ՝...:

Նույն արձանագրության 6.1 կետի համաձայն՝ որոշում է կայացվել գնումների մասին ՀՀ օրենսդրության պահանջներին համապատասխան՝ ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե հարցում ներկայացնել առաջին տեղ զբաղեցրած մասնակիցների՝ ՀՀ պետական բյուջեի նկատմամբ հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ժամկետանց հարկային պարտավորությունները, ինչպես նաև հրավերի 2.3 կետի ֆինանսական միջոցներ որակավորման չափանիշին վերաբերող պարբերությամբ նախատեսված որակավորման պահանջի առկայության վերաբերյալ:

Ի պատասխան վերոհիշյալ հարցման՝ ՀՀ ԿԱ ՊԵԿ-ի կողմից 11.01.2018թ-ին տրամադրվել է եզրակացության, համաձայն որի՝ «Տիգրան Ավիկ» ՍՊԸ-ն հայտը ներկայացնելու նախորդող երեք հաշվետու տարիների համախառն եկամուտի հանրագումարը կազմում է «0» ՀՀ դրամ:

Գնահատող հանձնաժողովի 12.01.2018թ. ժամը 16:00-ին տեղի ունեցած նիստի թիվ 3 արձանագրության 1.1 կետի համաձայն՝ գնահատող հանձնաժողովը որոշել է Երևանի Մխիթար Հերացու անվան պետական բժշկական համալսարան հիմնադրամի կարիքների համար շինարարարական աշխատանքների ձեռքբերման նպատակով հայտարարված գնանշման հարցման ընթացակարգի առաջին տեղ զբաղեցրած մասնակից՝ «Տիգրան Ավիկ» ՍՊԸ-ի հայտը մերժել՝ հիմք ընդունելով ՀՀ կառավարության Գնումների գործընթացի կազմակերպան կարգի 48-րդ կետի 2-րդ ենթակետը:

Բացահայտված թերություններ հակիրճ շարադրանքը՝

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետը սահմանում է, որ մասնակիցն ընդգրկվում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում, եթե՝

ա. խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը,

բ. որպես ընտրված մասնակից հրաժարվել է պայմանագիր կնքելուց,

գ. հայտերը բացելուց հետո հրաժարվել է գնման գործընթացին հետագա մասնակցությունից:

ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 63-րդ կետի 1-ին ենթակետի համաձայն՝ հրավերով պահանջվում է, որ ՀՀ ռեզիդենտ հանդիսացող մասնակիցը, բացառությամբ անհատ ձեռնարկատեր չհանդիսացող ֆիզիկական անձի, հայտով ներկայացնում է հայտարարություն այն մասին, որ իր կողմից հայտը ներկայացվելուն նախորդող՝

ա. երեք հաշվետու տարիների համախառն եկամտի հանրագումարը պակաս չէ ներկայացված գնային առաջարկից,

բ. հաշվետու տարվա ընթացքում պարտավորությունների հաշվեկշռային արժեքը չի գերազանցել ակտիվների հաշվեկշռային արժեքը.

Նույն կետի 3-րդ ենթակետի համաձայն՝ մասնակցի որակավորումը գնահատվում է բավարար, եթե վերջինիս ապահովում է սույն կետով նախատեսված պահանջները:

«Տիգրան Ավիկ» ՍՊԸ-ն Ընթացակարգի մասնակցության հայտի թիվ 2 հավելվածով հայտնել և հավաստել է, որ Ընկերությունը բավարարում է ԳՀԱՇՁԲ-2017/1-ԵՊԲՀ ծածկագրով գնման ընթացակարգի հրավերով սահմանված մասնակցության իրավունքի պահանջներին, մինչդեռ ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտեի կողմից ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 43-րդ կետի 3-րդ ենթակետով և 44-րդ կետով սահմանված կարգով 11.01.2018թ տրամադրված եզրակացության համաձայն՝ «Տիգրան Ավիկ» ՍՊԸ-ի հայտը ներկայացնելու նախորդող երեք հաշվետու տարիների համախառն եկամուտի հանրագումարը կազմել է «0» ՀՀ դրամ:

Փաստորեն, նման պայմաններում Ընկերության կողմից Ընթացակարգի մասնակցության հայտի թիվ 2 հավելվածով ներկայացված հայտարարությունը՝ մասնակցության իրավունքի պահանջներին համապատասխանելու մասով, չի համապատասխանում իրականությանը:

Ինչպես արդեն նշվել է, Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետը սահմանում է, որ գնումներին մասնակցելու իրավունք չունեն նաև այն անձինք, որոնք հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ներառված են գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում: Նույն կետի 2-րդ պարբերությունը հստակ սահմանում է այն հիմքերը, որոնց առկայության դեպքում մասնակիցը ներառվում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում, դրանք են՝

ա. խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը,

բ. որպես ընտրված մասնակից հրաժարվել է պայմանագիր կնքելուց,

գ. հայտերը բացելուց հետո հրաժարվել է գնման գործընթացին հետագա մասնակցությունից:

«Տիգրան Ավիկ» ՍՊԸ-ն հայտի թիվ 2 հավելվածով հայտնել և հավաստել է, որ բավարարում է մրցույթի հրավերով սահմանված մասնակցության իրավունքի պահանջներին, որը հայտը ներկայացնելու նախորդող երեք հաշվետու տարիների համախառն եկամուտի հանրագումարը ստուգելու նպատակով ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտե համապատասխան հարցում է ներկայացվել: Արդյունքում արձանագրվել է, որ Ընկերության կողմից ներկայացված վերը նշված հայտարարությունը չի համապատասխանում իրականությանը, այլ կերպ ասած, առկա է Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով նախատեսված հիմքը, որի պարագայում Ընկերությունը չի կարող մասնակցել գնումների գործընթացին: Միևնույն ժամանակ համապատասխան հայտարարությունն իրականությանը չհամապատասխանող գնահատվելու դեպքում չի կարող արձանագրվել մասնակցի կողմից Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետով նախատեսված գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու որևէ հիմքի առկայություն, քանի որ մասնակիցը տվյալ դեպքում ի սկզբանե գնման գործընթացի շրջանակում չի ստանձնել որևէ պարտավորություն, որը խախտվել է, կամ թույլ չի տվել պայմանագրով նախատեսված որևէ պարտավորության խախտում, կամ չի հրաժարվել գնման գործընթացին հետագա մասնակցությունից, ինչպես նաև չի հրաժարվել պայմանագիր կնքելուց:

Մեր կարծիքով, «Տիգրան Ավիկ» ՍՊԸ-ն ներկայացրել է հայտարարություն, որը ստուգվել է սահմանված կարգով և որի՝ իրականությանը չհամապատասխանելու հանգամանքը հիմք է հայտը մերժելու, այլ ոչ թե Ցուցակում ներառելու համար:

ՀՀ գնումների բողոքարկման խորհրդի ուշադրությունն եմ հրավիրում այն հանգամանքի վրա, որ եթե 22.12.2010թ. ընդունված «Գնումների մասին» ՀՀ օրենքով մասնակցին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու հիմք էր հանդիսանում նաև մասնակցի կողմից կեղծ տվյալի ներկայացումը, ապա 2016 թվականի դեկտեմբերի 16-ին ընդունված և ներկայումս գործող

«Գնումների մասին» ՀՀ օրենքով «կեղծ տվյալի ներկայացումը» որպես մասնակցին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու հիմք հանվեց օրենքի տեքստից:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 2-րդ հոդվածի 23-րդ կետը սահմանում է, որ գնման գործընթացը գնում կատարելու նպատակով գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ նախատեսված ընթացակարգերի, իրավունքների և պարտականությունների իրագործմանն ուղղված գործողությունների ամբողջություն է, ներառյալ՝ գնումների պլանավորումը, գնման առարկայի բնութագրի հաստատումը, պայմանագրի կատարումը և կառավարումը:

Գնման գործընթացին մասնակցելը, որը սկսվում է մասնակցի կողմից հայտ ներկայացնելու պահից, հանդիսանում է մասնակցի իրավունքը: Միևնույն ժամանակ մասնակիցը գնման գործընթացի շրջանակներում ստանձնում է որոշակի պարտականություններ, որոնք ծագում են որոշակի փուլից հետո, մասնավորապես՝ ընթացակարգի արդյունքներով առաջին տեղ զբաղեցրած մասնակից ճանաչվելուց հետո: Մինչև առաջին տեղ զբաղեցրած մասնակից ճանաչվելը, մասնակցի կողմից իրականացվող գործողություններն ուղղված են գնումների ընթացակարգին մասնակցության իրավունքի իրացմանը, որի շրջանակներում մասնակիցը դեռևս որևէ պարտավորություն չի ստանձնում:

Հետևաբար, հաշվի առնելով այն հանգամանքը, որ «Տիգրան Ավիկ» ՍՊԸ-ի հայտը ներկայացնելու նախորդող երեք հաշվետու տարիների համախառն եկամուտի հանրագումարը կազմում է «0» ՀՀ դրամ, որի հետևանքով Ընկերության կողմից ներկայացված հայտարարությունը որակվել է որպես իրականությանը չհամապատասխանող, համաձայն Օրենքի վերը նշված հոդվածի, Ընկերության կարծիքով, չի հանդիսանում մասնակցին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու հիմք, ուստի գտնում ենք, որ «Տիգրան Ավիկ» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու հիմքեր առկա չեն:

Անհրաժեշտ է նշել, որ նման դիրքորոշում է հայտնել նաև ՀՀ գնումների բողոքարկման խորհուրդը իր բազմաթիվ որոշումներով՝ մասնակցի «Ֆինանսական միջոց» որակավորման չափանիշը գնահատող հանձնաժողովի կողմից ոչ բավարար գնահատելու հիմքով մասնակցին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու հարցը քննելիս:»:

Խորհրդում նախաձեռնված պաշտոնական ընթացակարգի քննության նպատակով տեղի ունեցած նիստին մասնակցում էին «Տիգրան Ավիկ» ՍՊԸ-ի ներկայացուցիչներ՝ Էդգար Հունանյանը և Գագիկ Նազարյանը:

4. <u>ՍՑ-ԷՍ-2018/12 պաշտոնական ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը, Խորհրդի հիմնավորումները և եզրահանգումը.</u>

Խորհուդն ուսումնասիրել է ՀՀ ֆինանսների նախարարության 01.02.2018թ. թիվ 03/26-3/1599-18 գրությունը, Երևանի Մ. Հերացու անվան պետական բժշկական համալսարան հիմնադրամի 29.01.2018թ. թիվ 19 գրությունը և կից փաստաթղթերը, «Տիգրան Ավիկ» ՍՊԸ-ի կողմից 15.02.2018թ. Խորհրդին ուղղված գրությունը, «ԳՀԱՇՁԲ-2017/1-ԵՊԲՀ» ծածկագրով գնանշման հարցման հրավերը (այսուհետ՝ հրավեր), «ԳՀԱՇՁԲ-2017/1-ԵՊԲՀ» ծածկագրով հայտարարված ընթացակարգի գնահատող հանձնաժողովի (այսուհետ՝ նաև հանձնաժողով) 28.12.2017թ. ժամը 10:00-ին կայացած նիստի թիվ 2 և 12.01.2018թ. ժամը 16:00-ին կայացած նիստի թիվ 3 արձանագրությունները, Ընկերության կողմից Ընթացակարգին ներկայացված մասնակցության հայտի պատճենը, ՀՀ ԿԱ պետական եկամուտների կողմից 11.01.2018թ. տրված եզրակացությունը.

Երևանի Մ. Հերացու անվան պետական բժշկական համալսարան հիմնադրամի կարիքների համար շինարարական աշխատանքների ձեռքբերման նպատակով կազմակերպվել է «ԳՀԱՇՁԲ-2017/1-ԵՊԲՀ» ծածկագրով գնանշման հարցում (այսուհետ՝ Ընթացակարգ), որին մասնակցության հայտ է ներկայացրել «Տիգրան Ավիկ» ՍՊԸ-ն:

Ընկերությունը ընթացակարգին մասնակցելու նպատակով ներկայացված հայտի N2 հավելվածով՝ ընթացակարգին մասնակցելու նպատակով հրավերով սահմանված մասնակցության իրավունքի պահանջներին համապատասխանելու մասին հայտարարությամբ, հայտարարել և հավաստել է, որ բավարարում է «ԳՀԱՇՁԲ-2017/1-ԵՊԲՀ» ծածկագրով գնանշման հարցման հրավերով սահմանված մասնակցության իրավունքի պահանջներին:

Հանձնաժողովը 28.12.2017թ. ժամը 10:00-ին կայացած նիստի թիվ 2 արձանագրության N2 Հավելվածով որոշել է «ԳՀԱՇՁԲ-2017/1-ԵՊԲՀ» ծածկագրով գնանշման հարցման 1-ին տեղ զբաղեցրած մասնակից ճանաչել «Տիգրան Ավիկ» ՍՊԸ-ին:

Նույն արձանագրության 6.1 կետով Հանձնաժողովը որոշել է ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտե հարցում ներկայացնել առաջին տեղ զբաղեցրած մասնակիցների՝

ՀՀ պետական բյուջեի նկատմամբ հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ժամկետանց հարկային պարտավորությունների, ինչպես նաև հրավերի 2.3 կետի ֆինանսական միջոցներ որակավորման չափանիշին վերաբերող պարբերությամբ նախատեսված որակավորման պահանջի առկայության վերաբերյալ:

Հանձնաժողովը 12.01.2018թ. ժամը 16:00-ին նիստի թիվ 3 արձանագրության 1.1 կետով Հանձնաժողովը որոշել է «Տիգրան Ավիկ» ՍՊԸ-ի հայտը մերժել՝ հիմք ընդունելով ՀՀ Կառավարության «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 48-րդ կետի 2-րդ ենթակետը:

ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի՝

- 32-րդ կետի 1-ին ենթակետի «բ» պարբերության համաձայն՝ մասնակիցը հայտով ներկայացնում է իր կողմից հաստատված հայտարարություն՝ հրավերով սահմանված մասնակցության իրավունքի և որակավորման չափանիշներին իր համապատասխանության մասին,
- 43-րդ կետի 3-րդ ենթակետի համաձայն՝ հայտերի բացման նիստի ավարտին հաջորդող աշխատանքային օրը հանձնաժողովի քարտուղարն էլեկտրոնային փոստի միջոցով Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե (այսուհետ՝ կոմիտե) հարցում է ներկայացնում առաջին տեղն զբաղեցրած մասնակցի՝ հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ժամկետանց պարտավորությունների, ինչպես նաև ինչպես նաև հրավերով «ֆինանսական միջոցներ» որակավորման չափանիշի գնահատման համար սահմանված պայմանների առկայության վերաբերյալ՝ ներկայացնելով մասնակցի անվանումը և հարկ վճարողի հաշվառման համարը.
- 44-րդ կետի համաձայն՝ կոմիտեն նույն կարգի 43-րդ կետի 3-ին ենթակետով նախատեսված հարցումն ստանալու օրվան հաջորդող երկու աշխատանքային օրվա ընթացքում էլեկտրոնային եղանակով պատվիրատուին տրամադրում է հարցման մասին տեղեկատվություն: Եթե կոմիտեի կողմից սահմանված ժամկետից ուշ ներկայացված տեղեկատվությամբ արձանագրվում է, որ առաջին տեղն զբաղեցրած մասնակիցը հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ունեցել է օրենքով նախատեսված շեմը գերազանցող ժամկետանց պարտավորություններ կամ չի բավարարում հրավերով «ֆինանսական միջոցներ» որակավորման չափանիշի պահանջները, և պայմանագիրը կնքված չէ, ապա տվյալ

մասնակցի հայտը մերժվում է: Եթե սահմանված ժամկետում տրամադրված տեղեկատվության արդյունքում մասնակցի ներկայացրած հայտարարությունը որակվում է իրականությանը չհամապատասխանող, ապա հայտերի գնահատման նիստում հանձնաժողովի որոշմամբ տվյալ մասնակցի հայտը մերժվում է՝ անկախ մասնակցի կողմից կոմիտեի տրամադրած տեղեկատվությունից տարբերվող տեղեկատվություն ներկայացվելու հանգամանքից:

- 63-րդ կետի 1-ին ենթակետի համաձայն՝ մասնակիցների՝ օրենքի 6-րդ հոդվածի 3-րդ մասի 4-րդ կետով նախատեսված՝ «Ֆինանսական միջոցներ» չափանիշը գնահատվում է հետևյալ կարգով՝ հրավերով պահանջվում է, որ Հայաստանի Հանրապետության ռեզիդենտ հանդիսացող մասնակիցը, բացառությամբ անհատ ձեռնարկատեր չհանդիսացող ֆիզիկական անձի, հայտով ներկայացնում է հայտարարություն այն մասին, որ իր կողմից հայտը ներկայացվելուն նախորդող՝

ա. երեք հաշվետու տարիների համախառն եկամտի հանրագումարը պակաս չէ ներկայացված գնային առաջարկից,

բ. հաշվետու տարվա ընթացքում պարտավորությունների հաշվեկշռային արժեքը չի գերազանցել ակտիվների հաշվեկշռային արժեքը.

«ԳՀԱՇՁԲ-2017/1-ԵՊԲՀ» ծածկագրով Ընթացակարգի հրավերի՝

- 2.4 կետի 3-րդ ենթակետի համաձայն՝ մասնակիցը պետք է ունենա կնքվելիք պայմանագրով նախատեսված պարտավորությունների կատարման համար պահանջվող՝ ֆինանսական միջոցներ:

- 2.5 կետի 3-րդ ենթակետի ա) պարբերության համաձայն՝ «Ֆինանսական միջոցներ» որակավորման չափանիշը սահմանվում և գնահատվում է հետևյալ կարգով՝ ՀՀ ռեզիդենտ հանդիսացող մասնակցի, բացառությամբ անհատ ձեռնարկատեր չհանդիսացող ֆիզիկական անձի, հայտը ներկայացնելուն նախորդող՝

- երեք հաշվետու տարիների համախառն եկամտի հանրագումարը չպետք է պակաս լինի սույն ընթացակարգի շրջանակում մասնակցի ներկայացրած գնային առաջարկից.

- հաշվետու տարվա ընթացքում պարտավորությունների հաշվեկշռային արժեքը չպետք է գերազանցի ակտիվների հաշվեկշռային արժեքը:

Նույն ենթակետի բ) պարբերության համաձայն՝ ա) պարբերությամբ նախատեսված պահանջներին իր համապատասխանությունը հիմնավորելու համար մասնակիցը հայտով ներկայացնում է իր կողմից հաստատված հայտարարություն, որի իսկությունը հանձնաժողովը գնահատում է սույն հրավերով սահմանված պայմաններով.

• 8.13 կետի 3-րդ ենթակետի համաձայն՝ էլեկտրոնային փոստի միջոցով Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե (այսուհետ՝ կոմիտե) հարցում է ներկայացնում առաջին տեղ զբաղեցրած մասնակցի՝ հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ժամկետանց պարտավորությունների, ինչպես նաև սույն հրավերի 1-ին մասի 2.5 կետով նախատեսված՝ «ֆինանսական միջոցներ» որակավորման չափանիշի գնահատման համար սահմանված պայմանների առկայության վերաբերյալ՝ ներկայացնելով մասնակցի անվանումը և հարկ վճարողի հաշվառման համարը: Ընդ որում սույն ենթակետում հարցումն ուղարկվում է Ashkhen_Papoyan@taxservice.am էլեկտրոնային փոստի հասցեին սույն հրավերի 7-րդ հավելվածով նախատեսված ձևին համապատասխան՝ էլեկտրոնային նամակի պատճենները միաժամանակ ուղարկելով Lusine_Ghahramanyan@taxservice.am և procurement@minfin.am էլեկտրոնային փոստի հասցեներին.

• 8.15 կետի համաձայն՝ կոմիտեն նույն հրավերի 1-ին մասի 8.13 կետի 3-րդ ենթակետով նախատեսված հարցումն ստանալու օրվանից երեք աշխատանքային օրվա ընթացքում էլեկտրոնային փոստի միջոցով պատվիրատուին տրամադրում է հարցման մասին սույն հրավերի 8-րդ հավելվածով նախատեսված ձևին համապատասխան տեղեկատվություն: նույն կետով սահմանված ժամկետում կոմիտեից տեղեկատվության չստացման դեպքում մասնակցի ներկայացրած հայտարարությունները համարվում են իրականությանը համապատասխանող: Եթե կոմիտեի կողմից սահմանված ժամկետից ուշ ներկայացված տեղեկատվությամբ արձանագրվում է, որ առաջին տեղ զբաղեցրած մասնակիցը հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ունեցել է Օրենքով նախատեսված շեմը գերազանցող ժամկետանց պարտավորություններ կամ չի բավարարում սույն հրավերով «ֆինանսական միջոցներ» որակավորման չափանիշի պահանջներին և պայմանագիրը կնքված չէ, ապա տվյալ մասնակցի հայտը մեժվում է: Եթե սահմանված ժամկետում տրամադրված տեղեկատվության արդյունքում մասնակցի ներկայացրած հայտարարությունը որակվում է իրականությանը չհամապատասխանող, ապա հայտերի գնահատման նիստում հանձնաժողովի որոշմամբ տվյալ մասնակցի հայտը մերժվում է՝ անկախ մասնակցի կողմից կոմիտեի տրամադրված տեղեկատվությունից տարբերվող տեղեկատվություն ներկայացվելու հանգամանքից: Սույն կետով նախատեսված որակավորման չափանիշի

գնահատման ժամանակ հաշվի է առնվում սույն հրավերի 1-ին մասի 8.20 կետի 2-րդ ենթակետով նախատեսված ընթացակարգը:

Այսպիսով, խորհուրդն արձանագրում է, որ ՀՀ պետական եկամուտների կոմիտեի կողմից 11.01.2018թ. տրված եզրակացության համաձայն՝ «Տիգրան Ավիկ» ՍՊԸ-ի կողմից հայտը ներկայացնելուն օրվան նախորդող երեք հաշվետու տարիների համախառն եկամուտի հանրագումարը կազմում է 0 (զրո) ՀՀ դրամ:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ՝ նաև Օրենք) 2-րդ հոդվածի 23-րդ կետի համաձայն՝ գնման գործընթացը գնում կատարելու նպատակով գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ նախատեսված ընթացակարգերի, իրավունքների և պարտականությունների իրագործմանն ուղղված գործողությունների ամբողջությունն է, ներառյալ գնումների պլանավորումը, գնման առարկայի բնութագրերի հաստատումը, պայմանագրի կատարումը և կառավարումը:

Օրենքի 6-րդ հոդվածի՝

- 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետի համաձայն՝ մասնակիցն ընդգրկվում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում, եթե խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը:
- 2-րդ մասի համաձայն՝ գնումների գործընթացին մասնակցելու իրավունքից զրկված մասնակցի վերաբերյալ ունեցած տեղեկությունների հիման վրա լիազորված մարմինը պաշտոնական ընթացակարգ է նախաձեռնում գնումների բողոքարկման խորհրդում՝ առանց վճարի: Տվյալ մասնակցի կարծիքը լսելուց հետո գնումների բողոքարկման խորհուրդը որոշում է կայացնում մասնակցին նույն հոդվածով նախատեսված ցուցակում ընդգրկելու վերաբերյալ: Անձը նշված ցուցակում ընդգրկվում է երկու տարի ժամկետով:
- 3-րդ մասի 4-րդ կետի համաձայն՝ մասնակիցը պետք է բավարարի հրավերով սահմանված որակավորման չափանիշները: Մասնակիցը պետք է ունենա պայմանագրով նախատեսված պարտավորությունների կատարման համար հրավերով պահանջվող ֆինանսական միջոցներ:

Նկատի ունենալով, որ «Տիգրան Ավիկ» ՍՊԸ-ն ընթացակարգին մասնակցելու նպատակով ներկայացված հայտի N2 հավելվածով՝ հայտարարել և հավաստել է, որ

բավարարում է «ԳՀԱՇՁԲ-2017/1-ԵՊԲՀ» ծածկագրով գնանշման հարցման հրավերով սահմանված մասնակցության իրավունքի պահանջներին, սակայն Ընկերության երեք հաշվետու տարիների համախառն եկամտի հանրագումարը կազմել է 0 (զրո) ՀՀ դրամ, Խորհուրդը գտնում է, որ Ընկերությունը խախտել է գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, ինչը հանգեցրել է գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի՝ 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետով, 2-րդ մասով, 50-րդ հոդվածի 7-րդ մասի 2-րդ կետով՝ ՀՀ գնումների բողոքարկման խորհուրդը

Ո Ր Ո Շ Ե Ց

1. ՀՀ ֆինանսների նախարարության կողմից 01.02.2018թ. թիվ 03/26-3/1599-18 գրությամբ «Տիգրան Ավիկ» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով Խորհրդում նախաձեռնված պաշտոնական ընթացակարգը բավարարել:

2. «Տիգրան Ավիկ» ՍՊԸ-ին ներառել գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում՝ երկու տարի ժամկետով:

ՀՀ գնումների բողոքարկման խորհրդի որոշումն իրավապարտադիր է:

ՀՀ գնումների բողոքարկման խորհրդի որոշումը կարող է բողոքարկվել դատական կարգով:

ՀՀ գնումների բողոքարկման
խորհրդի անդամ՝ **ԷՄԻԼ ՍԱՐԳՍՅԱՆ**